ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» դեկտեմբերի 2024թ. N 101-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ն որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Ռուսաստանի Դաշնության «ԲԼԵՍԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «1-ին դասի շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ» և «Ջրամատակարարում և ջրահեռացում» ենթատեսակների համար:

2. 1-ին կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2025 թվականի դեկտեմբերի 16-ը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

12. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

04.12.2024

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ